ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Հայաստանի առաջին հանրապետության կազմավորումը և անկումը

ԱՌԱՐԿԱ - Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ - Վլադիմիր Դոլունց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ –Գորիսի թիվ 4 ավագ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Շալունց

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....1
1. Իրադրությունն Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո.....2
2. Հայ ժողովրդի 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը.....6
3. Հայաստանի Հանրապետության հռչակումը.....8
4. Պետականության կերտման առաջին քայլերը.....12
5. Սովորողին ներկայացվող պահանջներ: Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ 18
Եզրակացություն.....21
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը հայոց պատմության հերոսական և իրադարձություններով լի մասերից է: Հայ ժողովուրդը 600 տարվա ընդմիջումից, կենաց–մահու մաքառումներից հետո կարողացավ վերականգնել իր անկախությունը:

Դեռևս 19-րդ դարի վերջերից մեծ ծավալում ստացած հայ ազգային-ազատագրական շարժումը, չնայած ահռելի կորուստներին, հայ ժողովրդի կրած ցեղասպանությանը, այնուամենայնիվ, հանգեց անկախ պետության կայացմանը: Ճիշտ է, այդ պետությունը իր չափերով շատ փոքր էր և չուներ բավարար հզորություն, սակայն այն հիմք հանդիսացավ հայ ժողովրդի վերածննդի և հետագա զարգացման համար:

Հայաստանի առաջին Հանրապետության և մասնավորապես նրա կազմավորման պատմության ուսումնասիրությունը արդիական է և ուսանելի:

Մեր կողմից կատարվող աշխատանքը նպատակ ունի վեր հանելու Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորման խրթին և միաժամանակ հերոսական պատմությունը:

Սույն աշխատանքը կատարելիս օգտագործել ենք կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ հրատարակված փաստաթղթեր, դեպքերին ժամանակակից քաղաքական, պետական գործիչների աշխատություններ, ինչպես նաև խորհրդային և հետխորհրդային շրջանում ստեղծված մասնագիտական գրականությունը[1]:

Առանձնապես արժեքավոր են Հայաստանի առաջին Հանրապետության պետական գործիչների՝ Սիմոն Վրացյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի աշխատությունները, որոնք սկզբնաղբյուրային նշանակություն ունեն թեմայի ուսումնասիրության համար:

Օգտագործել ենք նաև վերջին շրջանում հրատարակված մի շարք հետազոտություններ՝ Հրանտ Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թվականին», Միհեր Կարապետյանի «Հայաստանը 1912–1920 թթ.», Ռուբինա Փիրումյանի «Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում 1917–1921 թթ.», Արմեն Ասրյանի «Արամ Մանուկյան. կյանքը և գործը» և այլն:

---

[1] Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ամբողջական ցանկը տրված է աշխատանքի վերջում:

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորման պատմությունը ուսումնասիրելու տեսակետից չափազանց կարևոր է այն շրջանը, որը սկսվեց 1917 թ. հոկտեմբերի 25-ին՝ բոլշևիկյան հեղաշրջումով և փակվեց 1918 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության հռչակումով:

1917 թվականը Ռուսաստանում հեղափոխական փոթորկումների տարի էր: 1917 թ. Փետրվարյան հեղափոխության և հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով քայքայվեց ռուսական կովկասյան ռազմաճակատը, որը թուրքական ներխուժման սպառնալիքի տակ դրեց ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանը:

Հեղափոխության հետևանքով Անդրկովկասում ստեղծված իրադրությունը շատ ավելի բարդ էր, քան կենտրոնական Ռուսաստանում: Դրա պատճառը ոչ միայն երկրամասի բնակչության չափազանց խայտաբղետ ազգային կազմն էր, այլև հասարակական-քաղաքական բազմապիսի ուժերի առկայությունը, ուժեր, որոնց շահերը խիստ հակասական էին, իսկ հարաբերությունները՝ երբեմն նաև թշնամական:

Քաղաքական զարգացումներն էլ ավելի բարդացրին հայության դրությունը: 1917 թ. նոյեմբերի 15 /28/-ին Թիֆլիսում հրավիրվեց մի խորհրդակցություն, որտեղ քննարկելով ստեղծված իրավիճակը, որոշվեց ստեղծել տեղական իշխանություն՝ Անդրկովկասյան Սեյմ՝ իբրև օրենսդիր մարմին, և Անդրկովկասյան կոմիսարիատ՝ իբրև Սեյմի գործադիր մարմին: Սեյմի անդամներից 32-ը մենշևիկներ էին, 30-ը՝ մուսավաթականներ, 27-ը՝ դաշնակցականներ: Կային նաև էսէռներ և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ, արտաքին հարաբերությունների ու աշխատանքի կոմիսար նշանակվեց Պետական դումայի անդամ, մենշևիկ Եվգենի Գեգեչկորին: Նոր կառավարությունը բաղկացած էր 12 կոմիսարներից: Հայերին տրվեց 3 տեղ. ֆինանսների կոմիսար՝ դաշնակցական Խաչատուր Կարճիկյան, խնամատարության կոմիսար՝ դաշնակցական Համո Օհանջանյան, պարենավորման կոմիսար՝ հնչակյան Գևորգ Տեր-Ղազարյան:

Երկրամասի ժողովուրդներին ուղղված դեկլարացիայում Անդրկովկասյան կոմիսարիատը հայտարարեց, որ Կոմիսարիատը ժամանակավոր մարմին է և գոյություն է ունենալու մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարումը[2]:

[2] Մ. Կարապետյան, Հայաստանը 1912 – 1920 թթ., Երևան, 2003, էջ 188:

Անդրկովկասյան կոմիսարիատին առընթեր գործում էին նաև այսպես կոչված «ազգային խորհուրդներ»:

Կոմիսարիատի ստեղծումը ուղղակիորեն նշանակում էր Անդրկովկասը կտրել Խորհրդային Ռուսաստանից, որը չէր բխում անդրկովկասյան ժողովուրդների, մասնավորապես՝ հայ ժողովրդի շահերից:

ՌԽՖՍՀ ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 16-ի նիստում քննարկելով Կովկասում ստեղծված դրությունը՝ որոշում կայացվեց կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ, բանվորների և զինվորների պատգամավորների Բաքվի խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար՝ մինչև Կովկասում խորհրդային իշխանության հաստատումը: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ 1918 թ. հունվարի 22-ին Ստ. Շահումյանը եկավ Թիֆլիս և անցավ իր պարտականությունների կատարմանը:

1918 թ. փետրվարի 14-ին Անդրկովկասյան կոմիսարիատն առաջարկեց Ստ. Շահումյանին 24 ժամվա ընթացքում թողնել Վրաստանի սահմանները, և, անցնելով ընդհատակ, փետրվարի 20-ին Ստ. Շահումյանը հարկադրված վերադարձավ Բաքու:

Նույն թվականի փետրվարի 10 /23/-ին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասյան Սեյմը, որի մեջ մտան դեռևս 1917 թ. նոյեմբերին Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորներ:

1918 թ. փետրվարի 12-ին, խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքերը հարձակում սկսեցին Կովկասյան ռազմաճակատում: Սեյմը, անընդունակ լինելով դիմադրություն կազմակերպելու հարձակվող թուրքական բանակի դեմ, համաձայնեց հաշտության բանակցություններ սկսել Տրապիզոնում:

Փետրվարի 17-ի նիստում հաստատվեց Տրապիզոն մեկնող պատվիրակության կազմը՝ Ա. Չխենկելի /նախագահ/ և 11 անդամներ, այդ թվում հայերից՝ Հովհաննես Քաջազնունի և Ալեքսանդր Խատիսյան: Պատմաբան Լեոն /Առաքել Բաբախանյան/ և Ռուբեն Տեր-Մինասյանը պատվիրակության մեջ մտան իբրև խորհրդականներ:

Փետրվարի 17-ին, երբ պատվիրակությունը /նախագահ՝ Ա. Չխենկելի/ պատրաստվում էր շարժվել Տրապիզոն, հաղորդագրություն ստացվեց Բրեստ-Լիտովսկում կնքվելիք պայմանագրի բովանդակության մասին: Այդ կապակցությամբ Սեյմը իր բողոքի հեռագրերը հղեց Բրեստ-Լիտովսկում բանակցություններին մասնակից, նաև մյուս մեծ տերությունների ղեկավարներին:

Տրապիզոնի հաշտության կոնֆերանսը բացվեց 1918 թ. մարտի 1-ին և տևեց մեկ ամիս՝ ավարտվելով առանց արդյունքների: Բանակցություններին զուգահեռ թուրքական զորքերը կովկասյան ճակատում անընդհատ առաջ էին շարժվում, իսկ բանակցությունների գործընթացում նրանց նպատակն էր՝ հենվելով Բրեստ-Լիտովսկի դաշնագրի վրա, ստանալ Կարսը, Բաթումը և Արդահանը, հասնել այն բանին, որ Անդրկովկասը հռչակի իր անկախությունը: Եվ երկու առումով էլ Թուրքիան հասավ իր նպատակին:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, թուրքական կողմը որդեգրել էր դիվանագիտական քայլերը, բանակցությունները ռազմական հաջողություններով ամրապնդելու քաղաքականություն:

Անդրկովկասյան պատվիրակությունը ապրիլի 1-ին հեռացավ Տրապիզոնից: 1918 թ. ապրիլի 9 /22/-ին գումարվեց Սեյմի 22-րդ նիստը, ուր դրվեց Անդրկովկասի անկախության հայտարարության հարցը: Մեռելատան էր նմանվում այդ օրը Սեյմի դահլիճը. իսկական սգի մեջ էին հայերը[3]: Հատկանշական է, որ մի շարք պատգամավորներ խստորեն դեմ արտահայտվեցին Անդրկովկասի անկախությանը:

Երկար վիճաբանությունից հետո «Անդրկովկասյան Սեյմը որոշեց՝ հայտարարել Անդրկովկասը ռամկավար դաշնակցային հանրապետություն»[4]: Ստեղծվեց Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետությունը՝ ԱԴՖՀ-ն, որը գոյություն ունեցավ ընդամենը մեկ ամիս չորս օր և լուծարվեց 1918 թվականի մայիսի 26-ին:

Սեյմի դաշնակցական ֆրակցիան, խորապես գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ վերցնում էր իր վրա այդ պատմական րոպեին, հայտարարում է, որ ընդունում է Անդրկովկասի անկախությունը: Ինչ վերաբերում է Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին, ապա նա ոչ միայն չողջունեց Անդրկովկասի անկախությունը, այլև իր անհամաձայնությունը հայտնեց մի որոշումով /ապրիլի 12- ին/, որի մեջ ասվում էր, որ Սեյմը ոտնահարել է ժողովրդի իրավունքը, որ նման ակտի համար անհրաժեշտ էր հանրաքվե կատարել:

Ապրիլի 12-ին հանձնվեց Կարսը[5]: Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում դա Անդրկովկասյան կառավարության կատարած երրորդ սխալն էր /առաջին սխալը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չճանաչելը և Թուրքիայի հետ բանակցությունների մեջ

---

[3] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 109:
[4] Մ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 206:
[5] Է. Զոհրաբյան, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, էջ 92:

ներքաշվելն էր, երկրորդը՝ Տրապիզոնի բանակցությունները խզելը/: Անդրկովկասի անկախությունը Թուրքիային ոչ միայն ազատում էր Բրեստի կապանքներից, այլև նորանոր նվաճումների հնարավորություն ընձեռում:

Խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված էր ասել, որ Անդրկովկասի անկախության հռչակմամբ գերմանա-թուրքական իմպերիալիստների համար լիակատար հնարավորություն էր ստեղծվում ազատորեն խախտել Բրեստ–Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող 4-րդ հոդվածը, այն պատճառաբանությամբ, որ վերջինս անջատվել է Խորհրդային Ռուսաստանից, ուստի Անդրկովկասը հեշտ ավար էր դառնում օտարերկրյա նվաճողների համար[6]: Նման գնահատականն ընդհանուր առմամբ ճշմարտացիորեն է արտացոլում իրականությունը:

Անդրկովկասի անկախության հռչակումից հետո Ե. Գեգեչկորին հրաժարական տվեց, և կազմվեց նոր կառավարություն՝ Ա. Չխենկելու գլխավորությամբ[7] :

Սեյմը որոշել էր թուրքերի հետ Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները շարունակել Բաթումում: Բաթումի հաշտություն կոնֆերանսին մասնակցելու համար կազմվեց անդրկովկասյան նոր պատվիրակություն՝ նորից Ա. Չխենկելու գլխավորությամբ:

Բաթումի կոնֆերանսի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1918 թ. մայիսի 11-ին, որի առաջին իսկ նիստը խորը հիասթափություն պատճառեց անդրկովկասյան պատվիրակներին. նրանց բոլոր հույսերն ի դերև ելան:

Եթե Տրապիզոնի կոնֆերանսում պայմանագրի ստորագրման համար թուրքերը երկու հիմնական պահանջ էին դնում, ապա այստեղ՝ Բաթումում, ի պատասխան այդ պահանջների կատարման մասին Չխենկելու արած հայտարարության, թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը հրապարակեց օսմանյան կառավարության տեսակետը, ըստ որի թուրքական կողմը հրաժարվում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիման վրա բանակցելու իր նախկին դիրքորոշումից և առաջ է քաշում նորանոր պահանջներ: Նման դիրքորոշումը Խալիլ բեյը հիմնավորում էր նրանով, որ Տրապիզոնից հետո «պատերազմ է եղել, արյուն է հոսել», հետևապես փոխվել է հարաբերությունների բնույթը: Նա անդրկովկասյան պատվիրակությանը ներկայացրեց նախապես պատրաստված «Խաղաղության և բարեկամության» մասին պայմանագրի նախագիծը: Ըստ այդմ՝ Հայաստանից խլվում էին Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը,

---

[6] Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հատոր 7, Երևան, 1967, էջ 39:
[7] Ռ. Փիրումեան, Հայաստանը Հ.Յ.Դ.- բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում /1917-1921 թթ./, Երևան 1997, էջ 88:

Շիրակի և Էջմիածնի գավառների մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ-Կարս և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղագծերը:

«Հայաստան փաստորեն չէր մնում,- գրում է Ս. Վրացյանը. – հայերին թողնվում էր հազիվ 11000 քառակուսի վերստ լեռնոտ տարածություն Արագածի և Սևանա լճի միջև»[8]:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Բաթումի բանակցությունները շուտով ընկան փակուղու մեջ Թուրքիայի անընդունելի պահանջների հետևանքով: Օգտվելով դրանից՝ թուրքական զորամասերը մայիսի 15-ին կրկին խախտեցին զինադադարը և հարձակման անցան Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Գրավելով քաղաքը՝ նրանք հարձակումը շարունակեցին Ղարաքիլիսայի ու Երևանի ուղղություններով: Մայիսի կեսերին թուրքական զավթիչները մոտեցան Երևանի մատույցներին: Երևանի և ամբողջ Արարատյան դաշտի բնակչության գլխին կախվեց զանգվածային կոտորածների սպառնալիքը: Ճգնաժամային այդ պահին հայ ժողովուրդը անձնազոհ պայքարի ելավ զավթիչների դեմ: Հայրենիքի պաշտպանության համար միահամուռ մղումով ոտքի կանգնեցին մեծից մինչև փոքրը, տղամարդ ու կին, տարբեր հասարակական խավերի ու քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Բոլորին համակել էր մի ուժեղ զգացում. կանգնեցնել ու ջախջախել թշնամուն, թույլ չտալ նրան կազմակերպելու խաղաղ բնակչության նոր, զանգվածային կոտորածներ:

Երբ թուրքերը հասել էին Սարդարապատի մատույցներին և բախում էին Երևանի դռները, իսկ քաղաքային դումայում աթոռներ գրաված ազգային ջոջերից ոմանք առաջարկում էին առանց դիմադրության Երևանը հանձնել թուրքերին, Վանի 1915 թ. պաշտպանական հերոսամարտերում թրծված Արամ Մանուկյանը Ազգային Խորհրդի նիստ է հրավիրում, խփում է ձեռքը սեղանին ու անդրդվելի կամքով հայտարարում, թե Երևանը չպետք է դատարկել, այլ պետք է դիմադրել մինչև վերջին մարդը[9]:

Եվ 1918 թ. մայիսի 21-24-ը տեղի ունեցավ հայոց նորագույն պատմության Ավարայրը:

Մայիսի 21-ի ուշ երեկոյան թուրքական 36-րդ դիվիզիան գրավեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Մայիսի 22-ին հայկական զորամիավորումները երկու ուղղություններով անցան հակահարձակման: Երեկոյան 5-րդ գնդի առաջապահները

[8] Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 119:
[9] Ա. Ասրյան, Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Երևան, 2008, էջ 190:

հետ գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը: Հաղթանակը կատարյալ էր: Լուրը կայծակի արագությամբ հասավ Երևան և աննախադեպ ոգևորություն առաջ բերեց: Հաղթանակի առթիվ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը էջմիածնում հանդիսավոր պատարագ մատուցեց:

Սարդարապատի հերոսամարտը ոգի ու կորով ներշնչեց հայ ժողովրդին: Հերոսամարտը շարունակվեց նաև հետագա օրերին[10]:

Սարդարապատը վերագրավելուց և համալրում ստանալուց հետո մշակվեց թուրքերի շրջապատման և ջախջախման պլան: Դրոյի զորաջոկատը 1918 թ. մայիսի 24-ին մտավ Ալի Քուչակ՝ դեպի Բաշ-Ապարան թուրքերին դիմակայելու համար: Համալրումներ ստանալով Սարդարապատի ճակատից՝ Դրոն հակահարձակում նախապատրաստեց և մայիսի 25-ին թուրքերին հետ շպրտեց Բաշ-Ապարանից: Եռօրյա համառ մարտերից հետո, մայիսի 29-ին ջախջախված թուրքերը փախան Համամլուից, որով վերջնականապես վերացավ թշնամու կողմից Երևանը աքցանի մեջ առնելու վտանգը:

Սարդարապատի ճակատամարտի հետ գրեթե միաժամանակ՝ մայիսի 24-28-ը համառ մարտեր ծավալվեցին նաև Ղարաքիլիսայում: Հայկական ուժերը նահանջել էին դեպի Դիլիջան, ուր հաստատվել էին գեներալ Թ. Նազարբեկյանը և իր գլխավոր շտաբը[11]: Սակայն այստեղ հասավ Սարդարապատի հաղթանակի լուրը, և նահանջող զորքն ու ժողովուրդը որոշեցին կանգ առնել և հակահարված տալ թշնամուն: Թշնամին, ունենալով թվական և զինական գերակշռություն, ի վերջո գրավեց Ղարաքիլիսան: Չնայած դրան՝ Ղարաքիլիսայի ճակատամարտն ունեցավ պատմական կարևոր նշանակություն: Այն մեծապես ձախողեց թուրքական հրամանատարության ռազմական պլանները:

Մայիսյան հերոսամարտերում հայերի դրսևորած ռազմական սխրանքն արժեվորեցին նույնիսկ թուրքերը: Այսպես՝ թուրքական կովկասյան բանակի հրամանատար Վեհիբ փաշան Բաթումում բավական լուրջ գնահատականներ է տվել հատկապես Ղարաքիլիսայի ճակատամարտի կապակցությամբ՝ համարելով այն ամենալուրջ գոտեմարտը Դարդանելի ճակատամարտից հետո[12]: Պատմագիտական գրականության մեջ վկայակոչում են նաև Վեհիբ փաշայի այն խոսքերը, թե

[10] Մ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 221-223:
[11] Մ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 226:
[12] Ս. Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, Մայիս 1918, Երևան, 1991, էջ 65-66:

Ղարաքիլիսայի մատույցներում հայերը ցույց տվեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները[13]:

Հայերի սխրագործությունները Սարդարապատում, Ղարաքիլիսայում և Բաշ-Ապարանում ի չիք դարձրեցին հայ ժողովրդին ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը և նախադրյալներ ստեղծեցին հայոց պետականության վերականգնման համար[14]:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1918 թվականի մայիսի 26-ին, Թիֆլիսում գումարվեց Սեյմի վերջին նիստը, որը վրացիների պնդմամբ ընդունեց հետևյալ բանաձևը. «Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության խնդրում երևան եկան հիմնական տարակարծություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կազմող ազգերի միջև, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակավոր իշխանության գոյությունը, Սեյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և հայտարարում չեղյալ իր լիազորությունները»[15]:

Մայիսի 26-ի կեսօրին Սեյմը ցրվեց, իսկ հինգ ժամ անց նույն սրահում գումարվեց Վրաց Ազգային խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ, որը հանդիսավորապես հռչակեց Վրաստանի անկախությունը: Մայիսի 27-ին Ադրբեջանի Ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանի անկախությունը:

Վրացյանը վկայում է, որ այդ օրերին հայ գործիչների մեջ միաձայնություն չկար: Դեպքերը գահավեժ՝ իրենք էին գալիս ստիպելու անել այն, ինչից մարդկային բանականությունը համառորեն աշխատում էր խուսափել[16]: Այդ հարցում վճռական խոսք ասաց Հ. Յ. Դաշնակցությունը, որն անհրաժեշտ գտավ, որ Հայոց Ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, ստանձնի կառավարական ֆունկցիաներ:

Մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը որոշեց Բաթում ուղարկել հայկական պատվիրակություն /Ա. Խատիսյան, Մ. Պապաջանյան, Հ. Քաջազնունի/՝ տալով նրան անկախ Հայաստանի անունից թուրքերի հետ բանակցելու և հաշտություն կնքելու բացարձակ լիազորություն, իսկ Հայաստանի անկախության հայտարարությունը եղավ ավելի ուշ՝ մայիսի 30-ին:

---

[13] Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թվականին և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 204:
[14] Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 236:
[15] Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 159:
[16] Նույն տեղում, էջ 159-160:

Մայիսի 29-ին գումարվեց ՀՅԴ Արևելյան և Արևմտյան բյուրոների, ՀՅԴ Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի, Սեյմի ու Ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների միացյալ նիստը, որտեղ որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն, կազմել կառավարություն միջկուսակցական հիմունքներով՝ մինչև օրենսդրական ժողովի գումարումը: Որոշվեց նաև Ազգային խորհուրդն ու կառավարությունը տեղափոխել Երևան, որը պիտի դառնար Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը: Անմիջապես սկսեցին կազմել անկախության հայտարարության բանաձևը, որի խմբագրությունը հանձնվեց Ա. Ահարոնյանին, Ն. Աղբալյանին, Հ. Քաջազնունուն և Ա. Խատիսյանին:

Այդ ժողովից հետո, 1918 թ. մայիսի 30-ին Հայոց Ազգային խորհուրդը հրապարակեց հայտարարություն, որը, ըստ Ս. Վրացյանի, թեև իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին[17]:

Հայոց Ազգային խորհրդի ընդունած պատմական բանաձևը հետևյալն է. «Հայտարարություն: Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարած է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար»[18]: Այս բանաձևը հրատարակվեց Հայոց Ազգային խորհրդի կողմից՝ իբրև Հայաստանի անկախության հայտարարություն:

Ս. Վրացյանը գտնում է, որ Հայաստանի անկախության հայտարարության օր պետք է համարվի մայիսի 30-ը, սակայն, հակառակ դրան , համարվում է մայիսի 28-ը, այսինքն՝ այն օրը, երբ Հայոց Ազգային խորհուրդը որոշեց հայկական պատվիրակություն ուղարկել Բաթում, իսկ հաշտության բանակցություններ վարելու թուրքերի նախապայմանը անկախության հայտարարությունն էր, ուստի այդ օրն էլ կարող է համարվել անկախության սկզբնավորության օր: Այսպես թե այնպես,

[17] Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 160:
[18] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն /Փաստաթղթերի ժողովածու/, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000, էջ 42:

շարունակում է Ս. Վրացյանը, Հայաստանի Հանրապետության ծագման օրը եղավ մայիսի 28-ը[19]:

Արխիվային մի փաստաթղթի հիման վրա Հ. Ավետիսյանը գրում է, որ Հայաստանի պետականության վերականգնման և Հայաստանի Հանրապետության ստեղծման փաստն ի լուր ամբողջ աշխարհի հայտնել են Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը, վարչապետ Հ. Քաջազնունին, արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը՝ հետևյալ հակիրճ ու հստակ ծանուցմամբ. «Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումից հետո Հայոց Ազգային խորհուրդը, այն իրավունքների հիման վրա, որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, 1918 թվականի մայիսի 28-ին որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայկական ժողովրդավարական Հանրապետություն»[20]:

* * *

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակները 1918 թ. մայիսի 30-ին հասան Բաթում, և նույն օրն էլ սկսվեցին բանակցությունները օսմանյան և հայկական պատվիրակությունների միջև: Հունիսի 4-ին հանդիսավոր նիստում ստորագրվեց հաշտության դաշնագիրը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև[21]: Թուրքական կողմից այն ստորագրեցին Պետական խորհրդի նախագահ Խալիլ բեյը և Կովկասյան ռազմաճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վեհիբ փաշան, հայկական կողմից՝ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը: Դա առաջին միջպետական փաստաթուղթն էր, որ ստորագրում էին անկախ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները:

«Բաթումի պայմանագիրը,- գրում է Ռուբենը,- փաստորեն ոչ այլ ինչ էր, եթե ոչ Անդրկովկասյան Հայաստանի բաժանումը Տաճկաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև, միայն մի փոքր կտոր թողնելով հայերին՝ երևույթները փրկելու համար »[22]:

Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից: Պայմանագրի համաձայն՝ Թուրքիայի տրամադրության տակ մնացին Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը, Երևանի և Դարալագյազի

---

[19] Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 161:
[20] Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 257:
[21] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923 թթ./, կազմողներ՝ Ձ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1972, էջ 531-537:
[22] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր է, Թեհրան, 1982, էջ 144:

գավառների մի մասը: Հայաստանի տարածքը հասցվեց ընդամենը մոտ 11 հազար քառակուսի կիլոմետր տարածության՝ 320 հազար բնակչությամբ: Թուրքիան իրավունք ստացավ Հայաստանի երկաթուղին օգտագործել՝ իր զորքերը և բեռները փոխադրելու համար:

Թուրք գործիչները փորձում էին Բաթումի պայմանագիրը ներկայացնել որպես թուրքական «գթասրտության» արդյունք, որպես «պարգև» հայերին: Սակայն ինչպես ցույց է տալիս Հ. Ավետիսյանը, թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառը Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերն էին[23]: Միաժամանակ նա գտնում է, որ Թուրքիան համաձայնեց ինքնիշխան Հայաստանի գոյությանը այն հաշվով, որ տնտեսապես թույլ և չնչին տարածք ունեցող Հայաստանը չի կարող վտանգ սպառնալ Թուրքիային, իսկ հեռանկարում նրանք տեսնում էին այդ Հայաստանի վերացումը[24]:

Սակայն Բաթումի պայմանագիրը կարճատև գոյություն ունեցավ: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի և Թուրքիայի միջև կնքված Մուդրոսի զինադադարի համաձայն Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր անվերապահ պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում: 1918 թ. դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից, իսկ Կարսի մարզը դատարկեցին 1919 թ. ապրիլին: Թերևս առաջին անգամ իրադարձությունները զարգացան հօգուտ հայության:

Հայ ժողովուրդը ցնծության ծափողջույններով չընդունեց հանրապետության ծնունդը, քանի որ չափազանց թանկ էր այն գինը, որ նա ստիպված եղավ վճարել դրա համար: Նա հիվանդ երեխա էր ծնել, քանի որ դարերով երազած ու փայփայած մեծ Հայաստանի փոխարեն ստացել էր մի Հայաստան՝ Արարատյան աշխարհի բեկորների վրա, որին ոմանք կհամեմատեին գերեզմանոցի և ոմանք էլ գաղթականական կայանի հետ[25]:

Հայաստանի պետականության վերականգնման առիթով ժամանակային մեծ հեռավորությունից ավելի խորքային եզրահանգումների է գալիս Հ. Ավետիսյանը: «Մեր պատմության այդ ծանրագույն ժամանակաշրջանը,- գրում է նա,- միաժամանակ ազգային իղձերի իրականացման ժամանակաշրջան էր: Հինգ դարից ավելի կորցրած պետականության վերականգնումը մեր հինավուրց ժողովրդի դարավոր բաղձանքն էր, որն իրականացավ համառ պայքարով, անթիվ զոհերով ու զրկանքներով: Հայկական

[23] Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 253:
[24] Նույն տեղում, էջ 254:
[25] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Է, էջ 144:

պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակն էր, բեկումնային իրադարձություն նրա կյանքում, բազմադարյան պատմության մեջ»[26]:

Անվիճելի է, որ նախընթաց շրջանում հայ քաղաքական ուժերը օրակարգում խնդիր չէին դրել կերտել հայկական անկախ պետություն: Հայության մեծ մասն այդ պահին հոգեբանորեն պատրաստ չէր ապրել անկախ պետականության պայմաններում: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է շեշտել այն փաստի նշանակությունը, որ միջազգային քաղաքական զարգացումները օբյեկտիվորեն հասունացրել էին այդ հնարավորությունը: Ըստ էության՝ պատմությունը հայ ժողովրդին ներկայացրեց ազգային պետականություն կերտելու հրամայական պահանջ: Ավելին՝ պատմությունը հայ ժողովրդից պահանջեց հիմնավորել նույնիսկ գոյության իր իրավունքը, պահանջեց հիմնավորել պայքարով, զոհերով և արյունով: Եվ հայ ժողովուրդը, զանգվածային սխրանք գործելով Մայիսյան հերոսամարտերի դաշտերում, նվաճեց այդ իրավունքը, կենսագործեց պատմության հրամայականները: Ահա այդ կերպ պատմական ասպարեզ իջավ Հայաստանի առաջին Հանրապետությունը, որպես օրինական տուրք հայ ժողովրդին պատմության կողմից:

Առաջին հանրապետության ստեղծումը հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից մեկն է: Մայիսի 28-ը նվիրական, սրբազան օր է դարձել հայ ժողովրդի համար և իր բացառիկ, անխախտ տեղը զբաղեցրել ազգային տոնացույցում:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հայկական պետականության կերտման գործում ներքին ու արտաքին բարդ խնդիրների լուծման համար պահանջվում էին գերմարդկային ճիգեր: Վիթխարի դժվարությունները հաղթահարելու ճանապարհին հայությունն ապրեց հույսերի ու սպասելիքների, միաժամանակ դառը հիասթափությունների մի բարդ ու հակասական շրջան:

Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումից և հայկական պատվիրակության վերադարձից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության կառավարության կազմակերպմանը և վարչապետ հրավիրեց Հովհաննես Քաջազնունուն:

1918 թ. հուլիսի 17-ին Հայոց Ազգային խորհուրդն ու կառավարությունը վերջապես Թիֆլիսից մեկնեցին Երևան: Մինչ վերջիններիս կազմավորումը և Երևան ժամանելը, շուրջ երկու ամիս հանրապետության փաստական կառավարությունը

[26] Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 254:

հանդիսանում էր դեռևս 1918 թ. մարտին Երևանում ստեղծված Վարիչների մարմինը: Անգնահատելի է այդ մարմնի ղեկավար և զինվորական գործերի վարիչ, իր ազնվությամբ և քաջագործություններով հայտնի Արամ Մանուկյանի դերը հայկական պետության վերականգնման ու ամրապնդման գործում:

Շուտով կառավարությունն անցավ գործի և ձեռնամուխ եղավ պետական ապարատի կառուցմանը: Բնականաբար, նորաստեղծ պետության կերտումը պետք է սկսվեր օրենսդիր և գործադիր մարմինների ստեղծումից:

Թիֆլիսի և Երևանի Հայոց Ազգային խորհուրդների մի շարք միացյալ նիստերում քննարկվեց ՀՀ օրենսդիր մարմնի ստեղծման հարցը: Որոշվեց եռապատկել 15 հոգուց կազմված Ազգային խորհրդի անդամների թիվը, հրավիրել նաև ադրբեջանցիների, եզդիների և ռուսների ներկայացուցիչներին: Այդ եղանակով կազմվեց 46 հոգուց բաղկացած Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդ անունով: Այս խորհրդարանը լինելու էր ժամանակավոր, մինչև որ ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով կհրավիրվեր Սահմանադիր ժողով:

1918 թ. հուլիսի երկրորդ կեսից Հայոց Ազգային խորհրդի և կառավարության՝ Հայաստանի մայրաքաղաք փոխադրումով հայ քաղաքական կյանքի կենտրոնը, որպիսին մինչ այդ համարվում էր Թիֆլիսը, այժմ դարձավ Երևանը:

Հայաստանի խորհրդի պաշտոնական բացումը տեղի ունեցավ օգոստոսի 1-ին: Բացմանը ներկա էին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Պարսկաստանի և Ուկրաինայի պատվիրակները:

Այդ օրը առաջին անգամ բարձրացվեց խորհրդարանի հաստատած Հայաստանի ազգային եռագույն դրոշը[27]:

Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը, որը հույս հայտնեց, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով[28]: Այդ օրը տեղի ունեցավ նաև առաջին զորահանդեսը, որին մասնակցում էին Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի մատույցներում թուրքերին ջախջախած հայոց կազմավորվող բանակի զինվորները՝ զորավար Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ: Ժողովրդի ոգևորությունը մեծ էր:

---

[27] Ս.Վրացյան, նշվ. աշխ., էջ 191:

[28] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն /Փաստաթղթերի ժողովածու/, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000, էջ 55:

Օգոստոսի 3-ին՝ Խորհրդի երկրորդ նիստում, կառավարության ծրագրային հայտարարությամբ հանդես եկավ վարչապետ Հ. Քաջազնունին՝ ընդգծելով, որ կառավարությունը ստիպված է «անձև քաոսի և ավերակների կույտից» ստեղծել «կենսունակ և աշխատունակ մի մարմին»[29]: Նախատեսվում էր երկրում կասեցնել քայքայման պրոցեսը և պայմաններ ստեղծել պետական շինարարության համար: Ներկայացված ծրագիրը վարչապետն անվանեց պետության գոյությունն ապահովող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր:

Հայաստանի խորհրդի և կառավարության առաջին գործը եղավ ձևավորել պետական ապարատը: Վերակազմվեցին բանակն ու վարչական հիմնարկները, կանոնավորվեց զինվորական և պետական ծառայողների ռոճիկը, միջոցներ ձեռնարկվեցին դատարանների և դպրոցների բացման ուղղությամբ: Խոշոր գումարներ հատկացվեցին գաղթականների ու որբերի խնամատարության, պարենամթերքի հայթայթման համար:

Մինչև սեփական օրենսդրության ընդունումը ՀՀ սահմաններում գործողության մեջ դրվեցին նախկին ռուսական օրենքները:

Երկրում ամուր իշխանություն ստեղծելու և իրավակարգ հաստատելու նպատակով 1918 թ. օգոստոսի 29-ին կառավարությունը Արամ Մանուկյանի առաջարկով ընդունեց օրենք մասնավոր զենքի ու զինամթերքի պետականացման մասին:

Պետական իշխանության ողջ համակարգի առջև կանգնած էր հայացման և ազգայնացման խնդիրը: Սկզբունքային նշանակություն ուներ հայերենի, որպես պետական լեզվի, ճանաչման մասին 1919 թվականի դեկտեմբերի 26-ի ընդունված օրենքը: Համաձայն դրա՝ հայերենը, որպես պետական լեզու, վեց ամսվա ընթացքում պաշտոնական գործածության մեջ էր դրվելու պետական ու հասարակական բոլոր հաստատություններում ու բանակում:

Հայաստանի Հանրապետությունն ուներ իր պետական խորհրդանիշերը: 1918 թ. հուլիսին որոշվեց ժամանակավորապես՝ մինչև Սահմանադիր ժողովի գումարումը, Հայաստանի ազգային դրոշ հաստատել եռագույնը՝ հորիզոնական կարմիր, կապույտ և նարնջի գույներով: 1920 թ. հուլիսի 23-ին հաստատվեց ՀՀ զինանշանը, որի հեղինակներն էին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը:

[29] Նույն տեղում, էջ 57-59:

Որպես պետական օրհներգ ընդունվեց Մ. Նալբանդյանի «Մեր Հայրենիքը» հայրենասիրական երգը[30]:

Հայոց պետականության կայացման մասին են վկայում նաև նրա ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: ՀՀ առաջին միջպետական կապերը հաստատվեցին Քառյակ միության երկրների՝ Թուրքիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի հետ: Դիվանագիտական կանոնավոր հարաբերություններ էին հաստատվել Վրաստանի դեմոկրատական հանրապետության հետ, մինչդեռ Ադրբեջանի հետ հարաբերությունները, կապված սահմանային վեճերի հետ, կրում էին խիստ լարված բնույթ: Հայաստանի Հանրապետությունը լիազոր-ներկայացուցիչներ կամ հյուպատոսներ ուներ ԱՄՆ-ում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում, Հաբեշստանում և այլ երկրներում: Դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվել Ռուսական կայսրության տարածքում ստեղծված մի շարք պետական կազմավորումների հետ: Կապեր էին հաստատվել նաև Խորհրդային Ռուսաստանի հետ: Իրենց հերթին բազմաթիվ պետություններ իրենց դիվանագիտական ներկայացուցիչներն ունեին Երևանում[31]:

Կայուն և գործնական դաշնակիցների բացակայության պայմաններում ՀՀ գոյության և անվտանգության միակ երաշխիքն ու ապավենը կարող էին լինել ուժեղ և մարտունակ զինված ուժերը: Անկախության առաջին ամիսներին խիստ նեղ սահմաններում պարփակված և Բաթումի դաշնագրի ծանր պայմաններով կաշկանդված հանրապետության համար ռազմական շինարարության ասպարեզում հրատապ ու առաջնահերթ խնդիրներ էին եղած ռազմական ուժերի վերակազմավորումը և քայլ առ քայլ ոչ մեծաքանակ, բայց ամուր ու կարգապահ բանակի ստեղծումը:

Քանի որ Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը կարող էր ունենալ ընդամենը մեկ հետևակային դիվիզիա, ուստի Հայկական բանակային կորպուսը պետք է վերակազմավորվեր և վերածվեր մեկ հետևակային դիվիզիայի: Վերակազմավորումը տեղի էր ունենում Թուրքիայի անմիջական վերահսկողության պայմաններում: 1919 թ. սկզբին ՀՀ զինվորական նախարարությանն առընթեր ստեղծվեց Ռազմական խորհուրդ, որի անփոփոխ նախագահ նշանակվեց նախկին Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը:

---

[30] Հայոց պատմության հիմնահարցեր, ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 2000, էջ 348:
[31] Մ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 298-299:

Շուտով կառավարության հրամանագրով նրա վրա դրվեցին նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ բանակի սպարապետի պարտականությունները[32]:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությամբ, Մուդրոսի զինադադարով /1918 թ. հոկտեմբերի 30/ Բաթումի պայմանագիրը համարվեց ուժը կորցրած, և ՀՀ կառավարությունը սկսեց արագորեն ընդլայնել իր զինված ուժերը: 1919 թ. վերջին հայկական բանակի թվաքանակը կազմում էր 30.000 մարդ: 1920 թ. նոյեմբերի սկզբին ՀՀ բանակի թվաքանակը, ներառյալ նաև կամավորական-պարտիզանական, միլիցիոներական և թիկունքային ծառայողները, հասնում էր 40.000-ի[33]:

Բանակի կազմակերպումով հայոց պետականությունն ամբողջացավ: 1919 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունն իր ներքին կառուցվածքով և արտաքին կապերով ձևավորված պետականություն էր:

Սովորողին ներկայացվող պահանջներ
Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է պատկերացում ունենա Հայաստանի 1918 - 1920 թթ. Հանրապետության հռչակման պատմական պայմանների, գոյության ժամանակահատվածի մասին: Կարողանա թվարկել Հայաստանի առաջին Հանրապետության չորս վարչապետներին, ներկայացնել զինվորական և դիվանագիտական նշանավոր գործիչներին:

[32] Մուրադ Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը /1918-1920 թթ./, Երևան, 1996, էջ 27:
[33] Նույն տեղում, էջ 45-48:


Թուրքական զորքերի հարձակումը 1918 թ.մարտ-մայիս
Անդրկովկասյան Սեյմը Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից
Մայիսյան հերոսա-մարտեր
ՀՀ անկա-խության հռչակումը
Բաթումի պայմա-նագիրը
Անդրադարձ
Պետականության կազմավորումը
Իշխանության ղեկավար մարմիններ
Պետական խորհրդանիշեր
Զինված ուժեր
օրենսդիր
գործադիր
դատական
դրոշ
զինանշան
հավակ
գոշշոցյան
բանակ
Խորհրդարան
Նախարար-ների խորհուրդ
Ժողովրդական դատարան

Անդրադարձ

1918 թվականի մարտ–մայիս միջակայքում պատմական կարևորագույն իրադարձությունների վերանայում:

Մտքերի գրոհ, որից առանձնացվում և համակարգվում են պատմական փաստերն ըստ ժամանակագրության և կարևորության: Արդյունքում ստացվում է հետևյալ սխեման, որը կառուցվում է գրատախտակին կամ համապատասխան պաստառի վրա՝ կրկին հիմնվելով աշակերտների ակտիվ մասնակցության հիման վրա:

Այդ ընթացքում ապահովվում է ուսուցանվող թեմայի մատուցման համար անհրաժեշտ բազան:

Քարտեզագրման շնորհիվ դեպքերը բխեցվում են մեկը մյուսից, որի ընթացքում աշակերտները ներկայացնում են յուրաքանչյուրի նշանակությունը և հետևանքները: Զուգահեռ տրվում են հուշող և ուղղորդող հարցեր.

Օրինակ՝

1. Ի՞նչ հետևանք ունեցավ Անդրկովկասյան Սեյմի որոշումը Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու վերաբերյալ:
2. Պատրա՞ստ էր Հայաստանը ինքնուրույն ապահովելու իր գոյությունը, դիմակայել թշնամուն և կայանալ որպես անկախ պետություն:
3. Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:

Հնարավո՞ր էր պետության կայացում առանց Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի:

4. Պատմական անհրաժեշտությու՞ն էր անկախության հռչակումը:
5. Ո՞վ առաջինը ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը փաստացիորեն:

Վերոհիշյալ հարցադրումներով աշակերտներն ինքնուրույն հանգում են Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման ու կայացման պատմական անհրաժեշտության կայացմանը՝ ապահովելով դեպքերի իրական ընթացքն ու ժամանակի դինամիկան: Այս ամենը գրատախտակի վրա առկա է և տեսանելի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1918 թ. մայիսյան բախտորոշ օրերը իրենց տարողությամբ ու նշանակությամբ աննախադեպ են հայոց պատմության մեջ: Հայաստանի սրտում՝ Սարդարապատի դաշտում, Բաշ-Ապարանի լեռնալանջերին, Ղարաքիլիսայի ձորերում վճռվեց հայ ժողովրդի ճակատագիրը, նրա լինել-չլինելու հարցը: Թվում էր, թե այլևս ոչ մի ուժ չի կարող փոխել արյունոտ իրադարձությունների ընթացքը: Սակայն հրաշքը պետք է գար, գար իր՝ կործանման եզրին հասած ժողովրդի բազուկներից: Եվ սկսվեց հայոց նոր Ավարայրը: Սկսվեց կյանքի համար: Երկար դարերի ստրկությունից հետո հայն իր արյան գնով ձեռք բերեց հարազատ ազգային պետության և անկախ ապրելու իրավունք:

1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը: Հանրապետության հռչակումով հայ ժողովուրդը ձեռք բերեց իր պետականությունը, որը կորցրել էր շուրջ 600 տարի առաջ, 1375 թ. Կիլիկյան Հայաստանի թագավորության կործանումով: Դա ազգային զարթոնքի, ապագայի նկատմամբ ունեցած հույսերի ժամանակաշրջան էր:

Կարճատև եղավ Հայաստանի առաջին Հանրապետության կյանքը, ողբերգական՝ վախճանը: Թեև երկուսուկես տարի հետո Առաջին Հանրապետությունը կործանվեց, բայց հասցրեց լուսե շառավիղ ձգել մեր անցյալի, ներկայի և գալիքի միջև:

Անկախության ձեռք բերումը, Հայաստանի առաջին Հանրապետությունը դասեր թողեցին, որոնք պետք է սերտենք ազգովին, ազգովին էլ տեր կանգնենք մեր պատմությանն ու մեր ճակատագրին:

Հայաստանի Հանրապետության պատմության տված կարևորագույն դասերից մեկը ազգային միասնության դասն է: Մենք միշտ պարտվել ենք, երբ համախումբ չենք եղել, երբ թշնամիները կարողացել են պառակտել մեր շարքերը: Մենք միշտ հաղթել ենք, երբ մի կամք ու բռունցք են եղել մեր ուժերը: Վկա՝ Վարդանանց կռիվը, Սարդարապատը, Արցախյան ազատամարտը:

1918 թ. մայիսին կենաց և մահու կռվի էին ելել և մաքառումի մեջ էին բոլոր հայորդիները: Կուսակցական պատկանելիություն և քաղաքական մտածելակերպ մի կողմ թողած՝ նրանք միասին էին նահատակվում կամ միասին հաղթում:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության տված մյուս դասն այն է, որ պետք է չեզոքացնել ազգային միասնությունը հյուծող ներքին ներհակությունները: Առաջին Հանրապետության իշխանությունները որոշակի ջանքեր թափեցին, որպեսզի

արգելակեն հայ հասարակության պառակտումը գաղափարական, դասակարգային կամ այլ հարթության վրա: Բայց ցավոք, այդ բանը չհաջողվեց անել, ինչն էլ տվեց իր դառը պտուղները: 1920 թ. Մայիսյան և հատկապես 1921 թ. Փետրվարյան ապստամբությունները Հայաստանում հազարավոր մարդկանց կյանքեր խլեցին: Եւ եթե հայ մարդիկ, որոնք քաղաքացիական եղբայրասպան կռիվներում այնպես անզիջում էին իրար հանդեպ, այնպես լիուլի թափում էին միմյանց արյունը, եթե նրանք նույնպիսի հետևողականությամբ ու եռանդով և այրող ատելությամբ կռվեին օտարների դեմ, ապա թշնամին չէր կարողանա այնքան հեշտությամբ մեր հողերը խլել մեր ձեռքից:

Առաջին Հանրապետության պատմության տված հաջորդ և թերևս ամենակարևոր դասը սեփական ուժերին ապավինելու դասն է: Երկար դարեր մեր ժողովուրդը իր փրկությունը սպասում էր հեռու կամ մոտիկ տերություններից: Դա մեր ազգային ողբերգությունների պատճառներից մեկն է եղել, որ ջլատել է հայ մարդու հավատն իր ուժերի նկատմամբ: 1918-1920 թթ. հայ ժողովրդի մոտ աստիճանաբար սկսեց գերիշխող դառնալ սեփական ուժերն արժեքավորելու գիտակցությունը:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ավանդած մյուս, չափազանց կարևոր և արդիական դասը ներքին խաղաղ շինարարության անհրաժեշտությունն է: Առողջ հասարակության ձևավորում, սոցիալական համերաշխության և արդարության հաստատում, տնտեսության համակողմանի և հեռանկարային զարգացում, կրթական համակարգի արդիականացում, մշակույթի զարգացման ապահովում, զինված ուժերի հետևողական հզորացում և այլն --- այս բոլոր կենսական նշանակության ասպարեզներում Առաջին Հանրապետության իշխանությունները ունեցան և տպավորիչ ձեռքբերումներ, և ցավալի վրիպումներ ու լուրջ սխալներ: Ներքուստ հզոր և կայուն պետություն, երկիր ունենալը թերևս ամենակարևոր նախապայմանն է, առանց որի առկայության ուղղակիորեն բացառվում է արդյունավետ արտաքին քաղաքականության իրականացումը, ազգային մեծ նպատակների իրականացումը:

Այսօր էլ հայ ժողովրդի և Հայաստանի երրորդ Հանրապետության առջև ծառացած են բազմաթիվ լրջագույն մարտահրավերներ, որոնց դիմագրավման հարցում նախապայմաններ պետք է հանդիսանան ազգային միասնության և համերաշխության ապահովումը, սեփական ուժերին հավատալն ու ապավինելը, անդուլ ստեղծագործ աշխատանքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1.1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923 թթ./, կազմողներ՝ Ձ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1972:

1.2. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն /Փաստաթղթերի ժողովածու/, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000:

2. Գրականություն

2.1. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Երևան, 2008:

2.2. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

2.3. Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, Մայիս 1918, Երևան, 1991:

2.4. Ձոհրաբյան է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Երևան, 2000:

2.5. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թթ., Երևան, 2003:

2.6. Կարապետյան Մուրադ, Հայաստանի Հանրապետության բանակը /1918-1920 թթ./, Երևան, 1996:

2.7. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հատոր 7, Երևան, 1967:

2.8. Հայոց պատմության հիմնահարցեր, ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 2000:

2.9. Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թվականին և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:

2.10. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր է, Թեհրան, 1982:

2.11. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

2.12. Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում /1917-1921 թթ./, Երևան, 1997: